Եւ ունէր քաղաքս այս ԻԴ. դուռն. ԺԸ. ի վերայ ծովուն եւ Զ. ի ցամաքի. զի սպիտակ ծով ովկիանոս բոլորեալ է զքաղաքն եւ միշտ հարկանէ զպարիսպս նորա: Եւ ի մէկ դուռն Եաի դուլան է. յոյժ ամբոց եւ անառիկ. զոր անդ արկանեն զմեծամեծ իշխանս, զպարոնայք եւ զխաներն, զորս ձեռբակալ առնեն կամ դերեն զթշնամիս: Եւ անդ դռան վրայ հանած էր սպիտակ մարմարէ ազդ եւ ազդ մեծամեծ մարդիք: Գնացաք ի Ղատրղալիմանն, Զաթլաղաբին, Սամաթեան եւ այլ տեղիս: Տեսաք զարմանալի շինուածք. եւ զեռնափորս սալարակապս — եւ ասին մեզ թէ բոլոր քաղաքիս ներքեւն այսպէս է եւ ջուր պատեալ — եւ կամուրջք եւ չէնք. զորս ոչ կարեմ մի ըստ միոջէ պատմել կամ գրել, զի մի ճանձրացեալ ներհիցէք, զի բազմութիւն խօսից տաղտկութիւն տայ լսելեաց: Զի որչափ կացի անդ, օր մի չկացի ի տան. այլ ամէն օր Երբայի յեկեղեցի մի կամ ի չէնք:

ՊԱԼԱՏ

Գնացի Պալատ, որ էր պաղատն Կոստանդիանոսի թագաւորին. որ անդ նստէր յամառն, զի ի բարձրաւանդակ տեղոջ էր, բարէշունչ օդն: Եւ մերձ նմին կայր եկեղեցի մի փոքրիկ, յոյժ ազնիւ եւ գեղեցիկ, սաֆի

427 յովկիանոս: — 429 ի. Եաի: — 429 յոյժ յամրոց: — 446 Կոստանդիանոսի: — 449 յօդն: